Արձանագրություն N 3

Ամանորի կապակցությամբ քաղցրավենիքի նվեր փաթեթների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

04.12.2018թ.
Ժամը՝ 11:30

ք. Երևան

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Ղազարյան, Գ. Սաֆարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Գ. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/2»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Ամանորի կապակցությամբ քաղցրավենիքի նվեր փաթեթների մատակարարման** պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------- Գ. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Է. Ղազարյան

---------- Գ. Սաֆարյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան